

— Թեղ զիտապէ, յա մառ կարդալ ի քո զաման
Առաւել քան զմայել, վայել, յալ գորար:

Ա. Դ.

Ի Գալիլէ:

ԳԻՆԴԱԿԱՆ ԵՐԼՑ:

(Տըլիլ):

Տեսանէր զայդ երկրատուն պարզ և՛ անշուր,
Այր Աստուծոյ բնակի ի նմա սարք վարուր,
Այն որ զնայցուածս վերան արեալ ամբոխին
Հեղու ի գեօզն զնայս գանձուց երկնային:
Սփռիկ զվիշտս, սրբազորձէ գնարանիս,
Որհնէ թղ խոնձս եւ զտարեկան արմօխ,
Նա սրբութեան դատարարակ քաղցրարան,
Զմարդն ընդունի մկրտութեամբ յաւաղան:
Եւ առաջնորդ զորով կենացն յաշխարհի
Յետ օրմասին հանգուցանէ ի շիրմի:
Ըստ խորհրդոյ, իմաստութեան եւ զործոց
Միւս ոմն տառուած է վասն նամայն զիւղացւոց:
Այն այն իցէ տնանկութիւն զմեղակ
Որում չիցէ մեռնեսս զոյ օժանդակ,
Վերնախրնամ թիկ տեսչութեան յայտնի են
Զորս բարեբաղդ խնամք երկրու ընծային:
Յաճախ ի խուցս, յորս կուտէ փորձութիւն
Զմահունս, զցաւ եւ զանկողնաց ճեմութիւն,
Երեւի նա, եւ ցաւն անդէն մեղմանայ,
Մերժի կարծան, մահուան երկիւղ վերանայ:
Լնու զկարիս, թղէմս ունի մեղանայ,
Ազրատք օրհնեն, յարդի արդեամբ յընչեղաց:
Եւ սաւալ երկու մանկանոցուր սխերիմք
Ի սեղանոյ նորա մեկնին մանրիմք:

Թարգմ. Ա. ՄԱՐՈՒԹԵԱՆՅ.

ԱԶԳԱՅԻՆ

ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԲԱՐԵՐԱՐ

ԳԵՈՐԳ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԱՆՈՒԶԱՐԵԱՆՅ.

Ի շարս համբաւեալ ազգասիրացնե-
կայ գարուս, կամ լաւ եւս էլ տեղ,
Ազգային բարեբարաց, համարելի է ան-
շուշտ եւ հանդուցեալ Պարսն Գէորգ
Մանուկեան Մանուշարեանը *) Նոր-
Ջուղայեցին, որոյ յանուն Աւար էջ-
միածնի կտակաւ թողեալ գումարայն
գտարեկան զշահն յատկացուցեալ է
Վեհափառ Հայրապետն յօգուտ Գէոր-
գեան ձեմարանի Մայր Աթոռոյս սրպէս
ընթերցար ի Սեպտեմբերի ամսեան Արա-
րատայ 1876 ամին, Արժանի է, եւ ամե-
նայն իրօք իրաւունս համարինք զհա-
մառօտագոյն կենսագրութիւն Նորին
հաղորդել Պատուարժան Խմբագրու-
թեանդ, որ թէեւ ի վաղուց ցանկա-
ցեալ, բայց առ ի չգոյէ ժամանակակ-
ցաց Նորին ի Ջուղայ, անկարացար պատ-
րաստել: Իսկ այժմ որ ի յաջողութե-
նէն Աստուծոյ անձամբ եղեւ մեզ հան-
դիպիլ ի Բիթաւիա, ուր գտար զհայրե-
նասէր պարոն Մանուկ Գորգանանեան
պատուական ազգայինն, զոր ինչ հար-
ցեալ ի նմանէ հանգամանօրէն տեղե-
կացար, նշանակեմք աստ:

(*) Այսու տոմարական անուամբ մասնաշէր զԳ.
Մանուկեանն պարոն Մանուկ Գորգանանեան:

Գէորգ Մանուկեան Մանուշարեանցն ծնեալ է ի Նոր Զուղա յամին 1763. եւ առ ի չգոյէ ազգային վարժարանի ուսանի ըստ յայնժամեան հասարակ սովորութեանն՝ առ ոտս քահանայի միոյ զՀայերէն ընթերցանութիւն եւ գիր։ Եւ իբր ի 25 ամ հասեալ հասակի առեալ ընդ իւր զմայրն հանդերձ Սիմօն եւ Մելքում եղբարք եւ Մարիամ եւ Թագուհի քերքն մեկնի ի Զուղայէ եւ գնայ ի Մատրաս։ Սիմօնն ի շրջակայս Մատրասու շրջէր մասնաւոր վաճառօք, եւ ի միում նուագի արեկոծութեան հանդիպեալ ընկղմի նաւն եւ ծովասոյզ լինի Սիմօնն ընդ այլոց ուղեկցաց։ Ծաղկեալ էր ընդ այն ժամանակս ի Մատրաս պարոն Յակոբ Յարութիւնեան Թաղինեանցն. սա օգնէ փոքր մի դրամագլխով՝ Գէորգայ, որ եւ տակաւ առ տակաւ յառաջացեալ տայ զքոյր իւր զՄարիամն յամուսին Յակոբայ։ Մեռանի մայրն ի Մատրաս։ Ապա յետ իբր 5 ամաց ընակութեան իւրոյ ի Մատրաս, Մելքումն մեկնեալ ի նմանէ գնալ ի Կալկաթա, ուր եւ ամուսնացեալ՝ հաստատի ընակութեամբ. եւ Գէորգն առեալ ընդ իւր զքեռայրն՝ զունայնացեալն յայնժամ ի գոյից՝ եւս եւ զՄարիամ եւ զԹագուհի զքորս իւր, գայ ի Բթաիա եւ հաստատի ընակութեամբ. ուր ողորմութեամբն Աստուծոյ այնչափ յառաջանայ եւ հարստանայ, զի տեսեալ զյաջողակութիւն սորին եւ փոխարքային Զաւայ կղզւոյն՝ մեծ սէր ցուցանէ, եւ փոխանորդն իւր տայ նմա արտօնութիւնըս ի ժամու եւ ի տարաժամու գալ առ ինքն եւ մտանել ի սենեակ իւր առանց

կանխաւ զեկուցանելոյ զգալտենէ իւրմէ. եւ այս մեծ պատիւ է եւ յարգանք առ Եւրոպէացիսն։ Եւ ընդ ժամանակս ժամանակս ի պահանջել հարկին տեղական կառավարութիւնն հարկադրուր փոխառութիւն առնուլ ի նմանէ. քանզի եւ ի ժամանակին յայնմիկ ոչ ոք քան զնա էր հարուստ ոչ ի Հայոց ¹⁾ եւ ոչ ի Հոլանդացոց. որոյ եւ կարողութիւնն հասանէր ցհինգ միլիօն ուրբի Հոլանդիոյ ²⁾։ Զէր նա ամուսնացեալ եւ էր սակաւապէտ յոյժ, թէպէտ եւ ոչ բոլորովին զուրկ ի պիտոյից կենաց։ Աստանօր հարկ է ասել առ սէրճմարտութեան, զի յայնժամ յոյժ սակաւ էին ի Զաւա Հոլանդացիք եւ այլազգի քրիստոնեայք. եւ պիտոյք կենաց յոյժ սակաւք. ի հակիրճ բան, ամենայն ինչ չափաւորութեամբ էր, եւ ինքն եւս աղբէր հայկական պարզութեամբ. զտուժարս գործոց իւրոց ինքն վարէր առանց գրագրի՝ թէ եւ ունէր տասնիւ չափ Հայ պատանիս ի գործատանն, եւ ձեւք Եւրոպականք ոչ այնչափ ծանօթք էին բընակչացն Բթաիոյ՝ որպէս այժմ. իսկ եւ վասն Գէորգայ գլխովին անճանօթ. զի ինքն կենցաղավարէր ամենայն պարզութեամբ, եւ հարկն հասարակաց եւս չէր յայնժամ ի միջի՝ որպէս այժմ առ ի ստիպել զնա ի շռայլութիւն։ Զամս

(1) Յետ ամին 1820 սկսանի զաղթականութիւն Հայոց ի Զաւա կղզւոց, որ յայնժամ հաղիւ 5 կամ 4 տուն կայր։

(2) Փոքր է ուրի ջաւայի քան զԿալկաթային, զի զարգիս 113 ուրի Զաւայի ի Կալկաթա արժէ 100 ուրի։

երեսուն անընդհատ պարապեալ ի վաճառականութեան, համբաւ նորին տարածի ի համայն կղզւոջն Զաւայի եւ յամենայն մերձակայս՝ եւս եւ ի Հնդկիս, եւ փառաւորապէս վարէ նա զկեանս:

Պատրաստէ զկտակ իւր այսպէս. յետ թողլոյ զգումարս վասն Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի, Ս. Երուսաղէմի, Ամենափրկեան վանաց, եւ սուրբ Կատարինէ անապատին կուսանաց Զուղայի՝ տատուիրէ տալ մի հարիւր հազար ռուբլի Մարիամու եւ յիսուն հազար ռուբլի Թագուհի քերց, եւ զմնացեալն եղբօր իւրում Մելքումայ, բայց այնու դաշամբ, զի քորքն ի կենդանութեան իւրեանց միայն ունիցին իրաւունս վայելելոյ զտարեկան շահ գումարացն եւ յետ մահու նոցին այն 150 հազարն եւս դարձցին առ Ժառանգս Մելքումայ, Սակայն օրհասն հասեալ ի վերայ Մելքումայ, մեռանի ի Կալկաթա, թողլով եւ Ժառանգս Գէորգն համարելով թէ բաւական պարզ է կտակն իւր, չառնէ փոփոխութիւն ինչ ի նմա յետ մահուն Մելքումայ եղբօրն իւրոյ. եւ այս թերեւս ի տնօրէնութենէն Աստուծոյ յօգուտ Զաւարդնակ Հայոց եւ մանկանցն Զուղայու, որպէս տեսցի ի ստորեւ:

Գէորգն չէր ամուսնացեալ՝ որպէս եւ օրիորդ Թագուհի քոյր իւր, վասն որոյ ամենայն խորհուրդք իւր եւ մտածմունք լեալ են զվերինն խորհել միտնգամայն զազգ իւր եւ զեկեղեցի: Խորհուրդ վեհ յղանայ յանկարծ ի միտս իւր, եւ գերազանցէր արդեօք զՍամուէլ Մուրատն եթէ եւ կամքն վերին հաճէին, այն է՝ բանալ դպրոց մի Հայկական ի Լօնտօն:

Եւ առ այն որոշէ մի միլիօն ռուբլի, զորոյ զչորս լաքն ⁽¹⁾ առաքէ կանխաւ ի Լօնտօն եւ ապահովէ ի դրամատան տէրութեան, եւ զմնացեալ վեց լաքն հետդհետէ կամէր առաքել, սակայն ի դրժբախտութենէն ասեմ ազգիս թէ ի տրնօրէնութենէն Աստուծոյ, օրհասն կանխեալ քան զգործ հասանէ ի վերայ յամին 1827, եւ փոխի առ Աստուած այրն առաքինի եւ ազգասէր Գէորգ Մանուկեան եւ թաղի ի հասարակաց հանգստարանի ⁽²⁾ ի Բիթալիա: Յետ մահուանն ինամակալութիւն որբոց Վէս կամարը անուամբ ճիւղն կառավարական կարգեալն ի պետութենէն վասն հասարակաց ըստ օրինացն Հոլանդիոյ՝ զոր նշանակեալ էր Գէորգն ի կտակակատար իւր, ի կարգադրելն զգործս հանգուցելոյն՝ բերէ ի Լօնտօնայ եւ զայն չորս լաքն եւ առարկելով թէ չիք ակնարկութիւն ինչ ի կտակին վասն դպրոցի, Ժառանգք Մելքումայ եւս եկեալ ի Կալկաթայէ՝ ամենեւին ապահով համարեն զինքեանս վասն միակ Ժառանգաւորութեան իւրեանց. զի որպէս ի վեր անդր յիշեցաք, Գէորգն նշանակեալ էր ի կտակի իւրում Ժառանգ ինքեան մի միայն զեղբայր իւր զՄելքում, եւ վասն քերցն յատկացուցեալ էր 150 հազար ռուբլիս: Քորքն երկօրեան բարուք իմանային զգործս իւրեանց, զի օրէնք տերութեան ի նը-

(1) Նշանակէ զթիւն 100,000, այս ինքն հարիւր հազար ի Հնդկաստան:

(2) Տեղին նշանակեալ ի տէրութենէն վասն եւրոպացւոց, եւս եւ ամենայն սպիտակամորթաց, ընդ որս դասին եւ Հայք:

պատահանքի ունէր վճռել վասն որոյ մտեալ ի դատ ընդ դէմ՝ ժառանգացն Մելքումայ՝ առարկեն թէ՛ Գէորգն դանուն Մելքումայ միայն յիշեալ է ի կրտակին լինել ինքեան ժառանգ՝ եւ ոչ եւ զժառանգս նորոյ ուստի մահումը Մելքումայ ոչնչացեալ է այն մասն կտակին, եւ հետեւաբար ինքեանք քոյր գոլով Գէորգայ՝ առաւել մերձաւոր ժառանգ համարին քան զժառանգս Մելքումայ։ Աճիւռ ատենին եւս ելան է ի նպաստ երկուց քերց, եւ զժառանգութիւնն բաժանեալ յերիս հաւասար մասունս, մի մասն հասան է ժառանգաց Մելքումայ վեց յսք ռուբլի, եւ երկու մասն՝ երկու քերցն վեցական լաք առ իւրաքանչիւրն։ (Յայտպիտի հանգամանս եթէ ոք առանց կտակի մեռանիցի, յայնժամ ժառանգութիւնն բաժանի ըստ զօրութեան ժառանգական օրինաց, վասն որոյ գրեթէ պարտաւորիչ իմն օրէնք են աստ իւրաքանչիւր անձին առնել կտակս ի կենդանութեան իւրեանց, եւ ի փոփոխիլ հանգամանացն՝ հարկ է փոխել եւ զինչ ինչ տրամագրութիւնս կտակին, ապա թէ ոչ՝ մասն միայն կտարի կրտակին, եւ մնացեալքն վճարին ըստ օրինաց տէրութեան, եւ յաղագս այսպիսի դատից բաղում են ծախք եւ սարսափելիք ի վնաս ժառանգաց, վասնորոյ ջանան ամենայն զգուշութեամբ փոփոխել միշտ զկտակս իւրեանց բնակիչք տէրութեանս)։ Ապա Յակոբ Յարութիւնեան եւ ամուսին իւր Մարիամ եւ քոյր նորին Թագուհի պատճառ լինին հաստատութեան ժամատան միոյ ի Բթաւիա սուրբ Հռիփսիմէ անուամբ, որպէս տե-

սաք յեկեղեցական տումարի՝ եւ յարձանաքարի իմն սկեզրով քանդակեալ եւ ագուցեալ ի հարաւային յորմն եկեղեցւոյն ի ներքս։ Յակովբ Յարութիւնեան բաւական հարստացեալ՝ մեռանի յամին 1844 եւ ի⁷ / 19 Յունիսի յանկարծակի մահումը եւ թաղի ի հասարակաց հանգատարանի ի Բթաւիա։ Եւ մընան երկու քորքն։ Անփոփոխ թողուին Գէորգայ զկտակ իւր յետ մահուան եղբոր իւրոյ Մելքումայ, թէ եւ մեծամեծ դժուարութեանց եւ սարսափելի ծախուց որպէս եւ կորստեան մեծագոյն մասին հարստութեան իւրոյ պատճառ եղեւ, սակայն որպէս ի վերն յիշեցաք՝ մեծամեծ օգտից ազգայնոցն Բթաւիոյ առիթ եղեւ այն։ Քանզի յետ աիրելոյ այսմ մեծաքանակ հարստութեան երկոքին քորքն Մարիամ եւ Թագուհի իբրեւ մի հոգի յերկուս մարմինս բնակեալ, ձեռնարկեն ի գործս բարիս։ Նախ պատճառ լինին հիմնարկութեան այժմեան սուրբ Յովհաննու եկեղեցւոյն առատաձեռն նպատուրք իւրեանց յամին 1854, որ յառաջն ժամատուն էր միայն թէպէտ եկեղեցին աւարտի ի նմին ամի, սակայն օծանի յամին 1857 ի տօնի Կաթողիկէ եկեղեցւոյն, յատկացուցանեն ի կալուած եկեղեցւոյն ըզհոյակապ տունն բնակութեան իւրեանց, որ թէ եւ այժմ հաղիւ 50 կամ 60 հազար ռուբլի արժէ, սակայն 120 հազար արժէր յայնժամ։ Զգետնին յորոյ վերայ եկեղեցին շինեալ է, որ ինքեանց էր սեղհականութիւն, յօժարակամ նուիրեալ են։ 120 հազար ռուբլի տուեալ են պատրաստ արծաթ՝ որով գնեալ են կա-

լուածս Մանուկ եւ Յարութիւն անուն ուսումնարանի՝ զոր կանգնեն ի յիշատակ իւրեանց՝ որ եւ շարունակէր մինչեւ յամս 1872: Վերտօլին միայլ տուննուրին ի կալուած ուսումնարանի: Թէ կալուածք եւ թէ գումարք տուեալք ի յերկուց քերցն առ կենդանութեամբ իւրեանց անցանեն քան զերեք լաք ռուբլի արժողութիւնս: Հոգաբարձութիւն յիշեալ ուսումնարանի ի քանի ամաց հետէ օգնութիւնս առնեն Ամենափրկչեան Մ. Յ. անուն գպրոցին Զուղայու վեց հարիւր ռուբլի առ ամս: Զարգարեալ են արծաթեղէն սուրբ անօթովք զեկեղեցին Բթաւիոյ սոյն քորք, քանզի յամենայն անօթս եկեղեցւոյն տեսի զյիշատակս գրեալ յանուն նոցին: Օժանդակեալ են եւ «Արծիւ» անուն տպարանին կալիաթայու, զոր բացեալ էր Պօղոս Վիչենեան կ. Պօլսեցին եւ զժամագիրք մի ձեռաց տպեալ է յամին 1849 յանուն նոցին, յորոյ ի սկիզբն տպեալ է եւ նամակն շնորհակալութեան ի տպագրապետէն առ երկօսին քորս ուղղեալ: Յետ այսպիսի Աստուածասիրական բարի գործոցն փոխի առ Աստուած բարեպաշտուհի Թագուհի օրիորդն յամի Տեառն 1856 եւ ի 27 / 9 գեկտեմբերի ի Բթաւիա ի հասակի 72 ամաց եւ թաղի ի հասարակաց հանգստարանի: Ըստ սովորութեան կատարի կտակն սորին, եւս եւ 50 հազար ռուբլին ժառանգեալն ի Գէորգայ՝ հասանի վերստին ժառանգացն Մելքումայ ի կալիաթա: Զայս եւս արժանի է յիշել, զի մինչ առ կենդանութեամբ Թագուհւոյ երկօքին քորքն շարժեալ ի հայրենասիրութենէն յատկա-

յուցանէին կալուածս եւ դրամագլուխս վասն եկեղեցւոյն եւ ուսումնարանին Բթաւիոյ, իբրեւ հարազատ դստերք Մայր Աթոռոյս յիշեն զսուրբ Էջմիածին եւ զայլս՝ որոշելով գումարս ամենեցուն եւ հաստատուն ձեռագրաւ իւրեանց առաջիարարեալ կառավարութեան տան վաւերացուցանել, սակայն ի կենդանութեան Մարիամու ժառանգք Մելքումայ եկեալ ի կալիաթայէ դարձուցանեն ըզմիտս Մարիամու եւ վարեն գատընդ դէմ՝ կտակակատարաց նորա: Հեռատեսութիւն կտակակատարաց վաղագոյն տեսեալ զայն, բոլորովմբ հանեալ էին ի ձեռաց Մարիամու զկալուած եւ զգումարս եւ յանուն եկեղեցւոյ եւ ուսումնարանի փոխարկեալ յատենի տէրութեան. վասն որոյ իբրեւ ազգային ստացուած մնայ այն. իսկ որ վասն սուրբ Էջմիածնի եւ այլոց խրատմունք՝ դիւրաւ յետս դառնան: Խոստմունք էին նոքա ի կենդանութեան կտակաւ, բայց յետ մահու կտակողին գործադրելի. իսկ կալուածքն վաղու եւս ի քանի ամաց հետէ անցեալ ի ձեռս Հոգաբարձուաց եկեղեցւոյն եւ ուսումնարանին: Եւ ապա ոչնչացուցեալ Մարիամու զառաջին կտակ իւր, զերկրորդն առնէ յաջողակ ժառանգացն Մելքումայ իբրեւ բնական հետեւանք առաջնոյն: Կեցեալ Մարիամու այլ եւս քանի ինչ ամս բարեպաշտութեամբ եւ երկիւղածութեամբ, եւ հասեալ յ87 ամաց հասակի փոխի առ Աստուած յամին 1864 եւ ի 22 / 4 Մայիսի ի Բթաւիա եւ թաղի ի հասարակաց հանգստարանի: Եւ ապա վերջին անգամ եկեալ ժառանգացն Մելքումայ ի կալիաթայէ, ժա-

աւանդեն զամենայն կարօղութիւնս Մարիամու եւ ի ցոյց երախտագիտութեան իւրեանց մարմարիոնեայ փառաւոր արձան իմն կանգնեն Յ կամ Ա հաղար առփի արժողութեամբ ի յիշատակ երկուց քերցն արտաքայ եկեղեցւոյն մերձ հիւսիսային որմնոյն ի միջավայրին: — Նկարագրեմք համառօտ զի արժանի է վասն ազնուութեան արուեստին, սպիտակ մարմարիոն է համայն արձանն, եւ բոլոր բարձրութիւն նորին իւր 10 ոտք, առաջին մասն է քառանկիւն պատուանդան իմն ի ձեւ սնդուկի հինգ ոտք երկայն եւ երեք ի լայն, եւ գրեթէ հինգ ի բարձր: յերկոսին երեսուն այս ինքն ի հիւսիսայինն անգղիարէն եւ ի հարաւայինն Հայերէն ոսկեգօծ քանդակեալ է յիշատակարանն *) ի վերայ սեաւ եւ ոգորկ արուեստական քարանց եւ ագռացեալ ի սպիտակ մարմարիոնն: ի վերայ պատուանդանի նստեալ կայ ոգին տըխրութեան կամ սգոյ զաջ բազուկն յեցեալ ի վերայ քառանկիւն սեան միոյ, յորոյ վերայ է եւ սալորն ածիւնի քո-

ղով ծածկեալ կիսովին, ծնունդ եղեալ ի բազկին, եւ զահեակ ձեռն իւր ի վերայ ծնգաց՝ ունելով ի ձեռին ծաղիկ ինչ վարդանման, եւ ողբոյ զմահ առաքինեացն: Գործ արդարեւ ճարտարարուեստ ձեռին Անգղիացւոյ ուրումն ի Կալկաթա: Եւ որովհետեւ եկեղեցին շինեալ է ի վերայ հիւսիսային փողոցի, յայտ երես շինեալ է փառաւոր սիւնազարդ գաւիթ եւ ի վերայ ճակատի եռանկիւն յորինեալ, Յատակն եկեղեցւոյն երեք ոտնաչափ բարձր գոլով ի գեանոյն եւ ի փողոցէ՝ գաւիթն եւս հաւասար բարձրութեամբ շինեալ եւ յատակն մարմարիոնով ծածկեալ, յորում ելանեն վեց աստիճանաւ, բնականապէս արտաքին գեղեցիկ իմն զարդ է վասն եկեղեցւոյ արձանս, զոր եւ տեսանեն ամենայն անցաւորք ի փողոցին: — Մխիթարութիւն մեծ է տեսանել զի՝ թէ եւ Գէորգ Մանուկեանն չէ կարացեալ կատարելապէս հասանել ի բուն նպատակ ազգասիրութեան իւրոյ, սակայն որպէս հանգուցեալ քորքն օգտեցուցեալ են զե-

(*) Այս օրինակ գրեալ է. « Շիրիմ Կիլիկի Մարիամու Յ. Յարութիւնեան ամուսնոյ Յակովբու Յարութիւնեան Աստիօր՝ քիւն Գէորգայ Մանուկեան Աստիօրի ճանդուցելոյ ի Բթաւիւ ի 4 Մայիսի 1864: » ի հասակի 84 ամաց. Կիլիկիս այս էր քարուր հեղ եւ քաղցր առ ամենեւեան, եւ երկիւղած եւ ողորմած՝ մայր որրոց՝ ապատան այրեաց՝ առաջապէս կան կեաց՝ եւ նեցուկ տնանկաց: Սուրբ Յովհաննու եկեղեցւոյն եւ Մանուկ եւ Յարութիւն ուսումնարանին անուանելոյ յանուն զերդաստանի իւրեանց, սա եւ հանդուցեալ սիրելի քոյր նորին օրիորդ Թագուհի Մանուկեան նպատակ ունեն բազմօր հասցած եւ օժիտս առանձին հաստատելով ի պէտս նոցա: Բարի գործք նոցին յաւերճադուցա-

« նեն զյիշատակս նոցա յորդոր լինելով զկնեաց « հետեւիլ օրինակի նոցին »:

Արմաշեց յիշատակարանքն յեկեղեցւոջ եւ ուսումնարանին ունին զհետապայ արձանադրութիւնս, այս ինքն՝ հիւնեալ յերկուց հայրենաւոր քերց:

« Ա՛լ Յիսուս, երբ այն օր սիրական

« Ե՛րբ այն ժամ եկեցէ հրճուական

« Ե՛րբ Թողից զայս խշտի կաւեղէն

« Ա. ի կեալ անդ յերկինս յուսածէմ »:

« Երանի ողորմածաց, զի նոքա զողորմութիւն զըսցեն »: Մատ. Ե. 7:

« Մահարմանս այս կառուցաւ ի զորովայնց եղբորորդւոյ նորին ի Զօրապայ Մ. Մանուկեան ասպետէ ի Կալկաթա »:

կեղեցիքն Ռթալիոյ նոյնպէս եւ ժառանգք Մելքումեղբորն իւրոյ պատուաւորք են ի Կալիաթայ յորոյ միջի մին ի դատերաց Մելքումայ «Իշխան» անուն բարեպաշտուհի այրի տիկին հանգուցեալ պարոն Մանուկայ Զօրապեան՝ համբաւեալ է բարեպաշտութեամբ եւ քրիստոնէական երկիւղածութեամբ իւրով, զորմէ վկայեմք ականատես եղեալ նմա ի Կալիաթայ:

Յօրինուած կենսագրութեանս հանգուցեալ Վէորգայ Մանուկեան հիմնեալ է ի վերայ ճշգրիտ տեղեկութեանց առելոց ի հայրենատէր պարոն Մանուկայ Յորդանանեան պատուական ազգայնոյ՝ քան զոր չիք այլում ումեք ի ժամանակակից մարդկանէս առաւել ինչ գիտել զկենաց Վէորգայ վասն երկուց պատճառաց: Նախ զի պարոն Մանուկ Յորդանանեանն է մի միայն ժամանակակիցն հանգուցելոյն ի Ռթալիայ եւ երկրորդ՝ զի իբրեւ 5 ամբնակեալ է ընդ նմա ի կենդանութեան նորին: Ի յետին իմ գոյս հանգամանս յայցելութիւն գնացի ի տուն պարոն Մանուկայ ի 12 / 24 Յունվարի յայսմ 1877 ամի՝ իմացեալ պարոնի զցանկութիւն մեր՝ յօժարեցաւ ամենայն սիրով պատասխանել մի առ մի հարցմանցս՝ վասն որոյ մտեալ ի գրասենեակ նորին եւ նստեալ դէմ յանդիման՝ հարցինախ թէ ունի՞ ինքն առաւել մերձաւոր ծանօթութիւն քան զայս վասն հանգուցեալ Վէորգայ Մանուկեան: Յայտնեաց յոյժ երախտագիտական զգացմամբ թէ հինգ ամառ չափ շարունակ ծառայեալ է նմա ի վերջին ամս կենաց նորին: Զի յա-

մին 1820 նոյն պարոն Վէորգն բերել տուեալ է զինքն ի Զուղայէ եւ պահեալ առ իւր ի ցերեկին ի գործատան եւ յերեկոյն ի տան իրբեւ զձեռնասունս եւ ապա յամին 1824 այս ինքն երեք ամառ չափ միայն յառաջ քան զմահ Վէորգայ կամային մեկնեալ ի նմանէ պարոն Մանուկն, առանձին գործով զբաղել օկոսնի: Առաի ծանեայ զի ամենայն փոփոխութեամբ կարելի էր ճշգրիտ իմանալ զհանգամանս կենաց հանգուցեալ Վէորգայ: Եւ որպէս ի պատասխանիսն նրկատէի՝ ջանայր ամենայն ճշտութեամբ պատմել զպարագայս հարցին մանրամասնաբար իբրեւ ականատես եւ կենակից: Ամենայն հեղութեամբ անուանէր նա զայն ինքեան բարերար, եւ ուրախ էր սգւով, զի յետ 50 ամաց թէ եւ անագանս բայց հետամուտ լինիմք պատրաստել զկենսագրութիւն բարերարին իւրոյ՝ եւս եւ ազգային բարերարի: Յնծացեալ էր սգւով չափ, զի գործ բարերարութեան Վէորգայ հռչակեալ է ի ձեռն Որարատայ ամաթերթի սորբ Էջմիածնի ի ճառախօսութեան Վերապատիւ Գարրիէլ Ս. Արքեպիսկոպոսի Թէմակալ Առաջնորդին Տփլսեաց եւ Վերատեսչի Վէորգեան ձեմարանի Մայր Աթոռոյս յաւուր երկրորդ տարեդարձի նորին առաջի նորին Վերածայրեալ Սուրբ Օծութեան Տ. Տ. Վէորգայ Գ. Ազգասէր Հայրապետի ամենայն Հայոց, որ իմաստուն նախահոգութեամբ յատկացուցեալ էր զտարեկան տոկոս կտակեալ գումարոյն Վէորգայ Մանուկեան ի պէտս օգնականութեան ծախուց ձեմարանի:—Թէ եւ ի ճառին Կալիաթացի անուանեալ է հան-

գուցեալ Գէորգն թերեւս վասն ի կալկաթայէ գտանելոյ զգումարն, սակայն որպէս յայտնեցաւ ի պատմութիւնէն պարսն Մանուկայ, ծնեալ է նա ի նոր Զուղա եւ նախնիք նորին համայն Զուղայեցի տալա զընակութիւն միայն կալեալ ի Բթաւիա եւ անգ փոխեալ առ Աստուած:

Յուսալի է զի յընթերցմանէ կենսագրութեան՝ զոր հաճի հրատարակել պատուարժան Խմբագրութիւնդ, շարժին արք հոյակապք եւ առաքինիք, որոց պարգեւեալ է ի Տեառնէ ձեռնհասութիւն, եւ ցանկացեալ հետեւիլ, եւ գուցէ ո՞ր գիտէ եւ գերազանցիլ իսկ քան զԳէորգն, ջանան անմահացու ցանել դանուանս իւրեանց եւ իրաւամբ անուանիլ Ազգային բարերար, աներկմիտ գուլով զի թէ եւ անագան, բայց միշտ երախտագիտութեամբ յեղյեցիկն անուանք իւրեանց յապագայ սերնդոց:

Առաքինութիւնն անմահ է եւ անկորուստ:

Մտամք վասն բարորութեան Ազգիս

Ջերմեւանդն ազօթարար առ Տէր:

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅՈՑ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՀՆԳԱՍՏԱՆԻ:

Համար 40.

Ի 18/50 Մարտ, 1877.

Ի Ապրիլ:

Յետ սորա յաւելումք եւ զտեղեկութիւնքն զոր ընկալաք կանխաւ եւ միջոցաւ նորին Վերադառուութեան ըստ ինչորոց եւ հետազոտութեան մերում:

(Ալեասփրօնիւն հանգստեալ Բեռլինաւ ազայ Գէորգայ Մանուկեանին, Բալթասկաբոսք շալկալն խճառականին եղելոյ ի Բլաւիա՝ ի իղլլէն Տասայ, փրեալ է Եւրոպայա յով Տէառն 1873) ի 18 Մայիսի)

Ականաւոր վաճառականս սլոն ազայ Գէորգ Մանուկեանն ծնեալ է ի նորն Զուղա, որ յԱսպահան քաղաքի Պարսից, յամի Տեառն մերոյ 1764, ի հնագոյն իմն տոհմէ Մանուշարեանց կոչեցելոյ, յորմէ եւ ծագեալն է արգի ազգաբանութիւնն Զօհրաբեանց որ ի Զուղայ եւ ի շնդկաստան, Հայր նորին՝ Մանուկ անուն՝ չէ լեալ ընչաւէտ: Յետ մահու հօրն՝ նոյն Գէորգ որդի նորա տեսեալ զտուն հօրն իւրոյ եւ զինքն իսկ ի նեղին փճակի, թողլով զայն եւ զհայրենիսն իւր, ի հասակի իրր քսան ամենից, պանդխտեալ է ի քաղաքն Մատրաս, յարեւելեան Հնդկիս, ուր եւ լեալ են յայնմ ժամանակի բազում Հայք Զուղայեցիք բազմահարուստք՝ հայրենակիցք իւր, Ընդ ժամանակս ինչ մնացեալ անգր, ի գործս տուրեւառութեանց է պատաղեալ:

Ազայ Շամիր Սուլթան անուանեալ հարստագոյնն ի հայկազունս տեղւոյն՝ նոր Զուղայեցի՝ տեսեալ զնա ժիրս եւ աշխուրջս ի տուրեւառոյ տալով նմա (10000) տասն հազար Հնդկաց առփիս՝ իրր զբամազուխ (աւրմայէտ)՝ առաքեալ է զնա ի Զապայ կղզին, որ է ընդ վարչութեամբ թագաւորութեանն Հոլանդիոյ, որպէս գործակատար ինքեան: Այն սա մեծանուն ազայ Գէորգ Մանուկեան, մնացեալ անգր ի Բա-